600.0187.30.05.12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2012 թվականի №187Ն

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի №358Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №358Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում (այսուհետ՝Կանոններ), կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնների 2-րդ գլուխը լրացնել 13.7 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«13.7 Բազմաբնակարան շենքերի սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման համար դիմումը ներկայացնում, Մատակարարի հետ միացման պայմանագիրը կնքում և միացման վճարները վճարում է կառուցապատողը:»:

2) Կանոնների №2 հավելվածի՝

ա. 2.1 կետի 1-ին ենթակետում «Կողմերի միջև համաձայնեցված տեխնիկատնտեսական հիմնավորմանը համապատասխան» բառերը փոխարինել «ապահովելով դիմումում նշված տեխնիկական հարաչափերով էլեկտրամատակարարումը և հաշվառումը.» բառերով,

բ. 2.1 կետի 2-րդ ենթակետում «կնքել էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր» բառերը փոխարինել «ներկայացնել էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ» բառերով,

գ. 5.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1 Միացման վճարի հաշվարկը կցվում է սույն պայմանագրին: Միացման վճարի հաշվարկում $Վ_{լրաց}$ և $Վ_{պահուստ}$ բաղադրիչների առկայության դեպքում, դրանց մեծությունները որոշվում են՝ հիմք ընդունելով աշխատանքների նախահաշվային արժեքը, որոնք աշխատանքների ավարտից հետո ճշգրտվում են՝ելնելով փաստացի կատարված ծախսերից: »,

դ. 8.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
30 մայիսի 2012թ.